

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
2019 ԹՎԱԿԱՆԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Երեխայի իրավունքների պաշտպանության 2019 թվականի տարեկան ծրագիրը» (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 1559-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 40-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունը և ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 30 կառավարության որոշմամբ ամրագրված քաղաքականության հիմնական ուղղություններն ու նպատակները:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրի» դրույթներին, համապատասխանում է Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին և ուղղված է երեխաների, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությամբ, ոլորտում իրականացվող բարեփոխումներով, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ, երեխաների և դեռահասների առողջության և սնուցման կարգավիճակի բարելավմամբ, առողջ աճի և զարգացման ապահովմամբ, հաշմանդամության կանխարգելմամբ, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցմամբ, յուրաքանչյուր երեխայի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու ապահովմամբ, անչափահասներին ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացմամբ և հանցագործություններ կատարած անչափահասների թվի նվազեցմամբ, մշակութային արժեքներին հաղորդակցման, մշակութային կյանքին մասնակցության և ստեղծագործական գործունեության իրականացմամբ:

3. Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականությունը պայմանավորված է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ և երեխայի պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով, ինչը ենթադրում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովում, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավում և նրանց ինտեգրում հասարակություն:

4. Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրի նպատակն է՝

1) երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովումը, երեխայի և նրա ընտանիքի գնահատված կարիքների բավարարումը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրույթներից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքներից:

2) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը, երեխայի խնամքը ընտանեկանին առավել մոտ պայմաններում ապահովելը:

3) բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում խնամք ստացող երեխաների ընտանիք վերադարձի ապահովումը:

4) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպման և հասարակությանը ինտեգրման գործընթացի համակարգումը:

5) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, գնահատված կարիքների հիման վրա սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական գործնական աջակցության ցուցաբերումը:

6) հաստատություն երեխայի մուտքի կանխարգելումը այլընտրանքային ծառայությունների ցանցի, այդ թվում խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացման միջոցով:

7) Հայաստանի Հանրապետությունում երեխաների նկատմամբ թրաֆիքինգի և բռնության երևույթի կանխարգելումը:

5. Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերներն են՝

1) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների սոցիալ-հոգեբանական կարիքների բավարարման սահմանափակ հնարավորությունները, հաստատություններում շուրջօրյա խնամք ստացող երեխաների թվի նվազեցման և հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման նպատակով այլընտրանքային ծառայությունների պակասը:

2) «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» և Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ների չափահաս սաների հաստատությունից դուրսբերման հնարավորությունների պակասը:

3) վերականգնողական ծառայությունների պակասը:

4) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների ընդլայնման և զարգացման անհրաժեշտությունը:

5) բռնության ենթարկված երեխաների սոցիալական աջակցության ոչ բավարար հնարավորություններն ու մեխանիզմները:

6. Սոցիալական պաշտպանության ոլորտում «Երեխաների իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրի» շրջանակում իրականացվում են ընտանիքին, կանանց և երեխաներին աջակցության ծրագրի հետևյալ միջոցառումները:

7. «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ»

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործում է երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) 6 հաստատություն (մանկատուն), որտեղ իրականացվում է 631 երեխայի շուրջօրյա լրիվ խնամքը: Մանկատներից երեքը հատուկ է՝ մասնագիտացված, որտեղ խնամվում է ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներով շուրջ 450 երեխա: Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններն իրականացվում են «Երեխայի իրավունքների մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշումով, որով կարգավորվում է հաստատությունում խնամվող երեխայի խնամքն ու դաստիարակությունը, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշումով, որով կարգավորվում են հաստատություններ երեխաների ընդունելությունը և դրա հետ կապված գործընթացները, ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի

իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 30 արձանագրային որոշումով, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում (անկախ դրա իրավական-կազմակերպական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումով, որով սահմանվում են հաստատությունում խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները, ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու մասին» N 381-Ն որոշումով և այլ իրավական ակտերով:

8. «ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» միջոցառումն իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ Լոռու մարզում, 2014թ-ից՝ նաև Շիրակի մարզում: Միջոցառումը նախատեսում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից երեխաներին վերադարձնել կենսաբանական ընտանիքներ, ինչպես նաև կանխարգելել նրանց մուտքը հաստատություններ: 2014թ-ից՝ նշված երկու մարզում իրականացվող միջոցառմանը յուրաքանչյուր տարի ընդգրկվել է 100 երեխա:

9. «Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օժանդակության փաթեթի տրամադրում» միջոցառումը վերոնշյալ միջոցառման բաղկացուցիչ մասն է կազմում: ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերում իրականացվող սույն միջոցառման շրջանակում յուրաքանչյուր տարի 100 երեխայի ընտանիքների տրամադրվել է աջակցություն՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

10. «Երեխաների շուրջօրյա՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատների) շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» միջոցառումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հոկտեմբերի 30-ի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը հաստատելու մասին» N 1419-Ն որոշման: Սույն միջոցառման շրջանակում մատուցվում են հետևյալ ծառայությունները՝ շրջանավարտների ուսումնասիրություն, կարիքների գնահատում, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, բժշկական օգնության, իրավաբանական աջակցության տրամադրում, սոցիալիզացիաների աջակցություն, իսկ 2014թ-ից Վանաձոր և Գավառ քաղաքներում՝ «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան շրջանավարտների համար նախատեսվել են բնակարանների վարձակալում:

Միջոցառման նպատակն է ապահովել մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, ստեղծել բավարար պայմաններ հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպման և նրանց հասարակությանը ինտեգրելու համար:

11. «Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում» միջոցառումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1877-Ն որոշման. նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնի կողմից ծառայություններ են տրամադրվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան 300 երեխայի և նրանց ընտանիքներին: Միջոցառումն իրականացվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշումով, որով կարգավորվում է հաստատությունում խնամվող երեխայի խնամքն ու դաստիարակությունը, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումով, որով կարգավորվում են հաստատություններ երեխաների ընդունելությունը և դրա հետ կապված գործընթացները, ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում (անկախ դրա իրավական-կազմակերպական ձևից)

խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումով:

12. «Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ» միջոցառումն իրականացվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշումով, որով կարգավորվում է հաստատությունում խնամվող երեխայի խնամքն ու դաստիարակությունը, ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումով, որով կարգավորվում են հաստատություններ երեխաների ընդունելությունը և դրա հետ կապված գործընթացները, ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում (անկախ դրա իրավական-կազմակերպական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումով: Միջոցառման շրջանակում սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 350 երեխա խնամվում է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 4 հաստատությունում, որտեղ երեխաների խնամքը տարանջատվում է կրթությունից և կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում՝ երեխային հասարակություն ինտեգրելու նպատակով:

13. «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգաժողովայն ծառայություններ» միջոցառման շրջանակում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Դիլիջան, Իջևան, Բերդ և Նոյեմբերյան քաղաքների 4 կենտրոնում ծառայություններ են մատուցվում նշված համայնքների հատուկ կարիքներ, հաշմանդամություն, սոցիալիզացիանակալի և այլ խնդիրներ ունեցող երեխաների: Կենտրոնների ծառայություններից օգտվում է շուրջ 250 երեխա: Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու մասին» N 381-Ն, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 25-ի N 6-Ա/1 հրամանով և այլ իրավական ակտերով: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը 2008թ-ից իր գործունեությունն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաֆինանսավորմամբ: Նշված կենտրոնների 84 աշխատակցի աշխատավարձ է տրամադրվում ՀՀ պետական բյուջեից:

14. «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց սոցիալիզացիանակալի վերականգնողական ծառայություններ» միջոցառումն ուղղված է հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության երևույթների կանխարգելմանն ուղղված քաղաքականության շարունակականության ապահովմանը, որի շրջանակում նախարարության և «ԱՄԲՈՐ» Հայաստան հիմնադրամի հետ կնքված պայմանագրի համաձայն յուրաքանչյուր տարի կազմակերպության տարածքի վարձակալության ու թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության զոհերին (միջին տարեկան 8 անձի) տրամադրվող սոցիալիզացիանակալի վերականգնողական ծառայությունների տրամադրման համար 14 աշխատողի ՀՀ պետական բյուջեից տրամադրվում է աշխատավարձ:

15. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում, «Երևանի երեխաների «Ձատիկ» սոցիալական աջակցության կենտրոն»-ի կողմից յուրաքանչյուր տարի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 17 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք՝ մինչև նրան կենսաբանական ընտանիք վերադարձնելը, մանկատանը կամ երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունում տեղավորելը: Միջոցառումն իրականացվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու

դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշումով, ՀՀ Կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Երևանի «Ձատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1659-Ն որոշումով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից հաստատված 2013 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունով, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշումով, որով կարգավորվում են հաստատություններ երեխաների ընդունելությունը և դրա հետ կապված գործընթացները, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա իրավական-կազմակերպական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 25-ի N 6-Ա/1 հրամանով և այլ իրավական ակտերով:

16. «Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 և Ստեփանավան քաղաքի N 5 ներառական մանկապարտեզներում» միջոցառումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1515-Ն որոշման: Որոշման 31-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով և նախատեսված միջոցների շրջանակներում «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ բարեգործական հասարակական կազմակերպության Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 92 «Ներառական մանկապարտեզում» 18 աշխատակցի միջոցով իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող մինչև 6 տարեկան երեխաների առողջական խնդիրների վաղ միջամտությունը, մասնավորապես, ինքնասպասարկման և հաղորդակցման հմտությունների զարգացումը, ինտեգրումն ու կյանքի որակի բարելավումը, մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներով երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալական և հոգեբանական խնդիրների թեթևացումը:

Կազմակերպության կողմից հիմնված ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներն են մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող թվով 24 երեխաները: Միջոցառումն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաֆինանսավորմամբ՝ 18 աշխատակցի տրամադրվում է աշխատավարձ: 2018 թ. Ստեփանավան քաղաքի N 5 մանկապարտեզի հետ պայմանագիր չի կնքվել: Ներկայում մանկապարտեզում իրականացվում են շինարարական աշխատանքներ:

17. «Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է կազմակերպությունում ցերեկային ժամերին կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 100 և կազմակերպությունից դուրս շուրջ 50 երեխայի խնամքի տրամադրումը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը:

Կազմակերպության գործունեության առարկան կազմակերպության պասսարկման տարածքում երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրս բերելու նպատակով սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայությունների կազմակերպումը և (կամ) տրամադրումն է, կազմակերպությունում խնամք ստացող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին ցույց տրվող սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (շտկիչ վարժանքներով թերապիա) տրամադրումն է, աշխատանքային թերապիայի (16 տարեկանից բարձր երեխաների համար), առաջնային

բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, սոցիալական ներառմանն ուղղված այլ միջոցառումների կազմակերպումը:

«Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ» միջոցառումն իրականացվում է երեք կազմակերպությունում: Յուրաքանչյուր կազմակերպություն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության խնամք և սպասարկում իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքային միավորների չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն և N 815-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին թիվ 1292-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշումով, որով կարգավորվում են հաստատություններ երեխաների ընդունելությունը և դրա հետ կապված գործընթացները, ՀՀ կառավարության 2016 օգոստոսի 11-ի N 831-Ն, ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 22-ի N 1398-Ն և ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 4-ի N 762-Ն որոշումներով և այլ իրավական ակտերով:

18. «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառումն իրականացվում է ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի «ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 1324-Ն որոշման համաձայն՝ կազմակերպությունում խնամվող դպրոցում սովորող երեխաներին գրպանի ծախսերի համար, որպես դրամական աջակցություն, պետական բյուջեով նախատեսված միջոցների շրջանակներում յուրաքանչյուր ամիս տրամադրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար (գրպանի գումար):

19. «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառման շրջանակում մանկատների տվյալ տարվա շրջանավարտներին տրամադրվում է միանվագ դրամական օգնություն:

20. «Ինամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» N 459-Ն որոշման, առանց ծնողական խնամքի մնացած 25 երեխայի խնամքն իրականացվել է խնամատար ընտանիքներում: 2018 թվականից ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 94 երեխայի խնամքը կազմակերպել խնամատար 90 ընտանիքում: Ներկայում 22 խնամատար ընտանիքում խնամվում է 29 երեխա: Ինամատար ծնող դառնալու ցանկություն է հայտնել 70 քաղաքացի:

21. «Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» պետական ծրագրի նպատակն է անձի թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու արդյունքում կրած վնասների մասնակի փոխհատուցումը:

Դրամական փոխհատուցման իրավունքը տարածվում է այն անձանց վրա, ովքեր զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ են ճանաչվել ՀՀ վարչապետի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի N835-Ա որոշմամբ ստեղծված մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը գործում է 2015 թվականի նոյեմբերի 25-ից:

2018 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է դրամական օգնություն 7 անձի համար: Հանձնաժողովը որոշում է կայացրել 5 անձի փոխհատուցում տրամադրելու մասին: Հաշվի առնելով այն, որ անհնար է կանխատեսել միտումները, միանվագ դրամական փոխհատուցման միջոցները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով նախորդ տարվա՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց փաստացի քանակական տվյալները:

22. Ներկայում իրականացվող ոլորտային բարեփոխումների շրջանակներում երեխայի ըտանիքում ապրելու իրավունքի ապահովման, հաշմանդամություն ունեցող երեխաների այլընտրանքային խնամքի ծառայությունների զարգացման, մանկատների բեռնաթափման և այդ հաստատություններ մուտքի կանխարգելման գործընթացին նպաստելու նպատակով հատկապես կարևոր է նոր այլընտրանքային ծառայությունների համակարգի հզորացումը, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել երեխաների հետագա խնամքը կենսաբանական և փոխարինող ընտանիքներում, (խնամակալի, հոգաբարձուի, խնամատար ծնողի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընտանեկան տիպի փոքր տներում:

23. Պայմանավորված վերոգրյալով՝ իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններն այլընտրանքային ծառայությունների վերակազմավորման գործընթաց, համաձայն որի վերակազմավորված կազմակերպություններում մասնագիտական ծառայություններ կտրամադրվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում հաշմանդամություն ունեցող 3-18 տարեկան երեխաներին, կապահովվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ինչպես նաև աջակցություն կտրամադրվի ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

24. Հաստատությունների տեղակայման մարզերի գնահատված կարիքներին համապատասխան նախատեսվում է առկա միջոցների շրջանակում տարբեր համայնքներում ստեղծել երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ, որոնք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում կտրամադրվի աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, մասնավորապես, 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունը: Նոր ստեղծված կենտրոնների ծառայությունների մատուցումը կպատվիրակվեն մարզում գործող մասնագիտացված կազմակերպություններին:

25. Աշխատանքներ են տարվում ընդլայնելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ մասնավորապես առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաներին տրամադրվող անվճար և համայնքային ֆինանսավորման աջակցությամբ սոցիալական ծառայությունները՝ պահպանելով և զարգացնելով ներկայում հանրապետությունում գործող տարբեր կազմակերպությունների կողմից երեխաներին անվճար հիմունքներով տրամադրվող՝ պետության կողմից երաշխավորված սոցիալական ծառայությունների համակարգը:

26. Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների շրջանակներում միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից ուսումնասիրվել, գնահատվել են երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններում խնամվող երեխաների, նրանց ընտանիքների և ծագման համայնքների կարիքները, ինչը հիմք է հանդիսացել հաստատություններից կենսաբանական ընտանիք վերադարձող երեխաների ընտանիքներին տրամադրվող նյութական աջակցության ձևերի ընտրության և համապատասխան ծառայություն տրամադրելու համար:

27. 2016-2017 թվականների ընթացքում վերակազմակերպվող շուրջօրյա հաստատությունների երեխաների գնահատված կարիքներին համապատասխան իրականացվում են երեխային և նրա ընտանիքին ուղղված աջակցության ծրագրեր՝ երեխաներին ընտանիք վերադարձնելու և կանխարգելման, խնամատար ընտանիքում նրանց խնամքի կազմակերպման, վերականգնողական, ցերեկային խնամքի:

28. Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կենտրոնները նույնպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին կտրամադրեն մասնագիտական ծառայություններ՝ ըստ նրանց գնահատված կարիքների, այդ թվում՝ աջակցություն կտրամադրեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին:

29. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների բեռնաթափման, երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի ներդրման, հաշմանդամություն ունեցող երեխաների՝ խնամքի հաստատություններում հայտնվելու վաղ միջամտության խնդիրներին ուղղված գործընթացները իրականացվում են հետևյալ սկզբունքով.

1) Շուրջօրյա խնամքի հաստատություններին հատկացվող ընթացիկ ֆինանսական ռեսուրսներն ուղղել երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների ներդրմանը:

2) Խթանել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների որդեգրման գործընթացը, զարգացնել խնամակալական ընտանիքի ինստիտուտը, ինչպես նաև շարունակել հանրապետությունում խնամատար ընտանիքների ներդրման գործընթացը:

3) Իրականացնել հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատում և դրա հիման վրա հասարարական կազմակերպություններին պատվիրակած «Երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատությունների բեռնաթափման ծրագիրը» ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերից բացի իրականացնել նաև այլ մարզերում:

Համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատությունների (մանկատներ ու երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ) բեռնաթափման, որդեգրման մեխանիզմների հստակեցման, խնամատար ընտանիքների ներդրման գործընթացի արդյունավետության բարձրացման, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների համակարգի զարգացման նպատակով:

4) Երեխաների պաշտպանության ոլորտում կարևոր խնդիր է հանդիսանում հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ծառայություններ տրամադրող ցերեկային կենտրոնների գործունեությունը: Այդ իսկ նպատակով պետական աջակցություն է ցուցաբերվում «Լիարժեք կյանք», «Իմ ուղին» «Հույսի կամուրջ» և այլ հասարակական կազմակերպությաններին:

5) Յերեկային կենտրոններում խնամքի և սոցիալական այլ ծառայությունների մատուցումը նպաստում է ոչ միայն հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառմանը, այլև նրա՝ ընտանիքում ապրելու և նրանց ընտանիքների անդամների զբաղվածության հարցերի կարգավորմանը:

30. Մշակվել են մի շարք օրենսդրական նախագծեր (ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի որոշումներ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններ): Մասնավորապես, 2017թ. հուլիսի 13-ին N30 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին», որով սահմանվել են երեխաների իրավունքների պաշտպանության նպատակները, գերակայությունները, հիմնախնդիրները և առաջիկա տարիներին դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումները: «ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը: Մշակվել են «Երեխայի իրավունքների մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

31. Կշարունակվի նախարարություն համակարգի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն, երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություն) վերակազմակերպման գործընթացը:

32. Վերոնշյալ գործընթացով պայմանավորված 2018 թվականի հուլիսի 4-ին ընդունվել է «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու, գույք ամրացնելու, ամրացված ու ազատված գույքը որպես բնափրային օգնություն տրամադրելու, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը գույք նվիրաբերելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 762-Ն որոշումը, որի համաձայն «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի:

33. Հաստատությունների վերակազմավորման գործընթացի արդյունքում գոյացած ֆինանսական միջոցները կուղղվեն շուրջօրյա խնամք տրամադրող հաստատություններից կենսաբանական կամ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքներին տրամադրվող նյութական աջակցության, ընտանեկան տիպի փոքր տների ստեղծմանը, ինչպես նաև հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման վերաբերյալ համապատասխան ծրագրերի իրականացմանը:

34. Ընտանեկան տիպի փոքր տունը կտրամադրի մանկատան նույն ծառայությունները, սակայն այլ մեթոդաբանությամբ: Ծառայություններ կմատուցվեն բազմասենյակ բնակարանում կամ առանձնատանը՝ ընտանեկանին մոտ միջավայրում՝ տասից ոչ ավելի երեխաների, որոնք կմասնակցեն կենցաղավարմանը, իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը: Ավելին, ծառայության այս տեսակը թույլ կտա մասնագիտական և անհատական մոտեցում ցուցաբերել երեխաների կարիքներին, ինչպես նաև

հնարավորինս կապահովի երեխայի կապը իր հարազատ համայնքի հետ: փոքր տունը նրանց համար կդառնա ընտանիքի մոդել, որտեղ ի թիվս խնամքի, երեխաները կսովորեն կենցաղավարություն, ինքնուրույնություն և պատրաստ կլինեն ինքնուրույն կյանքի: Ըստ երեխայի գնահատված կարիքի, հնարավոր կլինի տրամադրել նաև մասնագիտացված խնամքի ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

35. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2018 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ իրականացվել է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների 184 մասնագետի վերապատրաստում: Այդ թվում վերապատրաստվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետներ: Դասընթացներին ներգրավվել են «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն», «Երևանի «Մանկան տուն», «Գավառի մանկատուն», «Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» և «Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն» ՊՈԱԿ-ների, ինչպես նաև ՍՕՍ մանկական գյուղերի «Իջևանի» մասնաճյուղի մանկական նյարդաբաններ, հոգեբանների մասնագիտական խումբ, արտ.թերապևտներ, մարզիչ մանկավարժներ, բժիշկ-վերականգնողաբաններ, պարաթերապիստ, ինչպես նաև տնօրեններ, փոխտնօրեններ, դաստիարակներ, ծրագրերի ղեկավարներ: Դասընթացի ավարտից հետո մասնագետները ստացել են պետական հավաստագրեր: Մինչև տարեվերջ նախատեսվում է «Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն», «Գյումրի քաղաքի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» և «Գյումրի քաղաքի Ֆ. Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ների ևս 100 մասնագետի վերապատրաստում:

36. Առողջապահության ոլորտում մոր և մանկան առողջության պահպանման խնդիրները կարևորված են ազգային մակարդակում և որպես գերակայություն արտացոլված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ռազմավարական և ծրագրային մի շարք փաստաթղթերում:

Առողջապահության ոլորտում Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

37. Ծրագրի նպատակն է՝

Երեխաների և դեռահասների առողջության և սնուցման կարգավիճակի բարելավում, առողջ աճի և զարգացման ապահովում, պատվաստումներով ընդգրկվածության բարձր մակարդակի պահպանում և հիվանդությունների կանխարգելում, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցում, հաշմանդամության կանխարգելում:

38. Ծրագրի խնդիրն է՝

1) արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման գծով՝

Երեխաների արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը լրիվ ծավալով, որն իր մեջ ներառում է տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից մինչև 18 տարեկան երեխաների զարգացման և առողջության հսկողությունն ու բժշկական օգնության և սպասարկման իրականացումը,

2) Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման գծով՝

Երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական իրականացումը, ներառյալ մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը, ինչպես նաև մինչև 18 տարեկան սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված երեխաների բժշկական օգնությունը:

3) Վերականգնողական-առողջարանային բուժման գծով՝

սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների (անկախ տարիքից) և մինչև 7 տարեկան խրոնիկ հիվանդ երեխաների (անկախ սոցիալական կարգավիճակից) վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը համապատասխան բուժկազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված ծավալներով:

39. 2011թ.-ին հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց և շարունակվում է իրականացվել երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը, որի ներդրման արդյունքում արձանագրվեցին երեխաների առողջության և մահացության մի շարք առանցքային ցուցանիշների բարելավում:

40. Երեխաների բժշկական օգնության և սպասարկման ոլորտում արձանագրված առաջընթացի շնորհիվ վերջին տարիների ընթացքում գրանցվել է մինչև 5 տարեկան երեխաների և մանկական մահացության կայուն կրճատում: Ըստ ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների՝ մինչև 5 տարեկան

երեխաների մահացության ցուցանիշը 2017թ. շարունակել է իջնել, կազմելով է 9,5% (2016թ.՝ 10,1%), իսկ մանկական մահացությունը կրճատվել է, հասնելով 8,1% (2016թ.՝ 8,6%):

41. Հանրապետության մարզերում ընդլայնվել են Երեխայի զարգացման գնահատման և վերականգնողական ծառայությունները: Այս ոլորտում ունեցած վերջին ձեռքբերումներից են՝ զարգացման խանգարումներով և հաշմանդամ երեխաներին սպասարկող ծառայությունների ցանցի ընդլայնումը, համայնքային ինտեգրացված ծառայությունների մոդելի ներդրումը, նորաձնային սկրինինգ ծրագրերի ընդլայնումը թե՛ աշխարհագրական ընդգրկվածության, թե՛ ֆինանսական ծավալների մեծացման առումով:

42. Շարունակում են իրականացվել և ընդլայնվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր, այդ թվում՝ ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի, անհասության ռետինոպաթիայի և լոռլոյան նորաձնային սկրինինգի իրականացման ծրագրերը: 2017թ. ներդրվել է «Սրտի կրիտիկական բնածին արատների» սկրինինգի ծրագիրը: Վերջիններս թույլ են տալիս վաղ հայտնաբերել նշված հիվանդությունները և ձեռնարկել միջոցառումներ այս երեխաների բուժմանն ուղղությամբ՝ կանխարգելելով դրանցով պայմանավորված հաշմանդամությունը:

43. Միջազգային համագործակցության արդյունքում հանրապետության ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններին տրամադրվել են սարքավորումներ, որի արդյունքում հանրապետությունում կապահովվի լոռլոյան սկրինինգի 100%-ոց ծածկույթ:

44. Խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման շրջանակներում հաշմանդամ երեխաները ստացել և շարունակում են ստանալ վերականգնողական բուժում ինչպես ամբուլատոր և հիվանդանոցային, այնպես էլ առողջարանային պայմաններում:

Աշխատանքներ են կատարվել խրոնիկ հիվանդություններով տառապող երեխաների բուժապասարկման բարելավմանն ուղղությամբ, մասնավորապես Դիաբետով հիվանդ խրոնիկ հիվանդ երեխաների բժշկական օգնության և սպասարկման և կյանքի որակի բարելավման նպատակով շարունակաբար իրագործվել է «Վերահսկի՛ր դիաբետը, ապրի՛ր լիարժեք կյանքով» միջոցառումների ծրագիրը՝ դրանից բխող 2017թ. միջոցառումներով:

45. Կարևորվել է դպրոցահասակ երեխաների շրջանում առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության, սնուցման, ռիսկային վարքագծի, սեռական և վերարտադրողական առողջության, ֆիզիկական և հոգեկան առողջությանը վերաբերվող վարքագծի բարելավման անհրաժեշտությունը: Առողջապահության նախարարի հրամանով հաստատվել և կրթության և գիտության նախարարությանն է տրամադրվել «Դպրոցներում երեխաների առողջ սնուցման և ֆիզիկական ակտիվության սկզբունքների ներառմամբ առողջությունը խթանող օրինակելի քաղաքականությունը»:

46. Չնայած այդ ձեռքբերումներին, ոլորտում դեռևս մտահոգիչ են, եվրոպական երկրների համեմատ, մանկական և 0-5 տարեկան երեխաների մահացության հարաբերականորեն բարձր մակարդակը և դրանց իջեցման տեմպերի նվազումը, ըստ աղքատության մակարդակի և մայրերի կրթական ցենզի ՄՄ ցուցանիշների զգալի անհավասարությունների պահպանումը, մանկական մահացության կառուցվածքում նորաձնային մահացության և պերինատալ պատճառներից երեխաների մահացության բարձր տեսակարար կշիռը:

47. Երեխաների զարգացման և մանկական վերականգնողական ծառայությունների մատչելիության, մասնավորապես, հաշմանդամ երեխաների վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման շարունակականության ապահովման հարցը շարունակում է մնալ օրակարգում՝ քանի որ, չնայած այս ոլորտում արձանագրած զարգացումներին, օր օրի շարունակում է մեծանալ հաշմանդամ երեխաների վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման պահանջարկը, որի հնարավորությունը ներկայում շատ սահմանափակ է վերականգնողական ծառայություններ մատուցող կենտրոնների բյուջետային ֆինանսավորման անբավարարության պատճառով:

48. Մանկական բնակչության շրջանում մի շարք հիվանդություններով տառապող երեխաներ, ներառյալ ուռուցքային հիվանդությունները, նյարդամկանային ախտահարումները, մանկական ուղեղային կաթվածի ծանր ձևերը, ծանր գանգուղեղային և ողնուղեղային տրավմաների հետևանքները, զարգացման ծանր՝ անդառնալի բնույթ ունեցող խանգարումները, բնածին և ժառանգական հիվանդությունները (զարգացման բազմակի անոմալիաներ) և այլն, պալիատիվ խնամքի և բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեն, մինչդեռ բացակայում է երեխաների պալիատիվ օգնության խնդրի շուրջ որևէ ծրագիր, թերի են տրամադրվող օգնության մեխանիզմները:

Վերոհիշյալ և բազմաթիվ այլ հարցերի լուծումները քայլ առ քայլ կտրվեն 2019թ. ընթացքում և շարունակական:

49. Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակը՝ յուրաքանչյուր քաղաքացու իր հակումներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն ստանալու ապահովումն է: Երեխայի հիմնական իրավունքներից է կրթության իրավունքը: Միջնակարգ կրթությունը Հայաստանի Հանրապետության պետական ուսումնական հաստատություններում անվճար է: 1999 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է «Կրթության մասին» (ՀՕ-297) Հայաստանի Հանրապետության օրենքը, որը հիմնվելով սահմանադրական դրույթների վրա, որոշակիորեն ուղղորդում է կրթության համակարգի զարգացումը: Համաձայն այս օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակում ները նախատեսվում են օրենքով:

50. Երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրի շրջանակներում կրթության ոլորտում սահմանվել են հետևյալ խնդիրները՝
 նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության ոչ բավարար մակարդակը, շատ համայնքներում նախադպրոցական կրթական ծառայությունների բացակայությունը,
 ա) հանրակրթական դպրոցների սահմանափակ կարողությունները՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ապահովման գործում,
 բ) դպրոցից դուրս մնացած երեխաների հաշվառման և նրանց կրթության մեջ ընդգրկման համակարգի թերի լինելը.
 գ) կրթության մեջ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավվածությունը մեծացնելը, ինչպես նաև նրանց՝ իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունները ընդլայնելը,
 դ) սովորողների շրջանում քաղաքացիական գիտակցության բարձրացումը, որոշումների կայացմանը երեխաների մասնակցության ընդլայնումը, ինչպես նաև սեռով պայմանավորված կարծրատիպերի հաղթահարումը,
 ե) երեխաների ազատ ժամանցի ու հանգստի կազմակերպման համար տրամադրվող սահմանափակ պետական հատկացումները, ինչի արդյունքում այդ ծառայությունները շատերի համար դառնում են անհասանելի:

51. Վերջին տարիներին կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունքում, նկատվում է առաջընթաց՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր հանրակրթական դպրոցներում ներգրավելու գործում: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը որչ հանրապետության տարածքում՝ հանրակրթության համակարգում, անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրա կրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժա հոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

52. Օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով, 2016 թվականի փետրվարին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը: Համաձայն նշված ժամանակացույցի, հատուկ դպրոցների վերակազմակերպման գործընթացը սկսվել է 2016 թվականին՝ ՀՀ Սյունիքի մարզից: Ընդ որում, յուրաքանչյուր մարզում, հատուկ դպրոցների վերակազմակերպմանը զուգահեռ, կիրականացվեն.
 ա) նոր ձևավորված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և հանրակրթական դպրոցների ղեկավար ու մանկավարժական աշխատողների վերապատրաստում,
 բ) սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոց,

գ) հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում:

53. «Տավուշի մարզում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել է «Հույսի կամուրջ» Հասարակական կազմակերպությանը՝ իր 4 մասնաճյուղերով: 2018 թվականին ձևավորվել են 2 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ Արմավիրի մարզում, իսկ 2019 թվականին գործընթացը կշարունակվի Երևան քաղաքում, Շիրակի և Արագածոտնի մարզերում»:

54. Նախադպրոցական կրթության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է առկա ներուժի պահպանմանը, դրանց զարգացման նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Ոլորտին աջակցելու և ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագիր իրականացնելու համար: ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվում է նոր՝ «Կրթության բարելավում» վարկային ծրագիրը, որի շրջանակներում 2018 թվականին կշարունակվեն ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը՝ դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ: Այս ծրագրի շրջանակներում 2018 թվականին դրամաշնորհներ կհատկացվեն հանրապետության 4 մարզերի նախադպրոցական ծրագիր իրականացնող 23 հաստատությունների, որի արդյունքում՝ նախադպրոցական կրթության մեջ լրացուցիչ կընդգրկվի շուրջ 500 երեխա:

55. Նախադպրոցական ծրագրերի (բացառությամբ Երևանում իրականացվելիք ծրագրերի) շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ևս ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նշված նպատակով նախատեսվել է 796.1 մլն դրամ՝ 6.3 հազար երեխայի կրթության գծով): Նախադպրոցական կրթության գծով ծախսերում ներառված են նաև դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաներին սննդով ապահովման գծով գումարները, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N749-Ն որոշման:

56. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հանրակրթական ծրագրերում ներառված են հանդուրժողականության, մարդու իրավունքների, ռասսայական խտրականության, ազգային փոքրամասնությունների պատմության և մշակույթի մասին թեմաներ: Հանրակրթական դպրոցի 2-4-րդ դասարաններում ներդրված է «Ես և շրջակա աշխարհը» առարկան, որի նպատակն է ընդլայնել երեխաների պատկերացումները և գիտելիքները շրջակա աշխարհի վերաբերյալ, զարգացնել նրանց մոտ կյանքի հմտություններ և կարողություններ: Հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի չափորոշիչում և ծրագրում ընդգրկված են մարդու հիմնարար իրավունքներին, կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը, բռնության վերացմանը, հանդուրժողականությանը և քաղաքացիական հասարակությանը վերաբերող թեմատիկ միավորներ:

57. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ մշակվել և ներդրվել է ուսուցչի (դասուցչի) ձեռնարկը տարրական դպրոցում՝ «Հանդուրժողականության ուսուցում», հիմնական դպրոցում՝ «Բազմազանություն և հանդուրժողականություն», ավագ դպրոցում՝ «Արժանապատվություն և հանդուրժողականություն» անվանումներով: Ծրագիրն աշակերտներին ուսուցանում է հանդուրժողականություն, ժողովրդավարություն, համագործակցություն, նպաստում է կոնֆլիկտների լուծմանը և այլն:

58. Ամառային ճամբարներում ու հանգստյան տներում կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4800 երեխայի ամառային հանգիստը:

59. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ կրթություն ապահովելու նպատակով, 2018 թվականին վերահրատարակվել է «Եզդիերեն լեզվի այբբենարան» դասագիրքը, ինչպես նաև հրատարակվել են՝ «Եզդիերեն» (9-10-րդ դասարաններ) և «Եզդի գրականություն» (6,7,11-րդ դասարաններ), «Այբբենարան (քրդերեն)», «Քրդերեն» (2,3-րդ դասարաններ) դասագրքերը: Միաժամանակ հաստատվել է նախորդ տարիներին հրատարակված և 2018-2019 ուստարվա համար գործածության երաշխավորված դասագրքերի ցանկը:

Նշված բոլոր ուղղություններով աշխատանքները կշարունակվեն նաև 2019 թվականին:

60. ՀՀ մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով

ղեկավարվել է ՀՀ կառավարության 2018 թվականի ծրագրի «5.5. Մշակույթ» բաժնով, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված «Գեղարվեստական կրթության հայեցակարգի» դրույթներով:

61. Մշակութային քաղաքականությունը արտացոլում է մշակույթի և արվեստի բնագավառում քաղաքացու և մարդու՝ մշակութային կյանքին մասնակցության, մշակութային և ստեղծագործական գործունեության իրականացման, մշակութային արժեքներին հաղորդակցման, գեղարվեստական կրթություն ստանալու և այդ կրթության ձևերն ու միջոցները ընտրելու հնարավորության իրավունքներն ու ազատությունները:

62. Մշակութային կրթության մատչելիության և որակի ապահովում

1) Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ հաստատվել է «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային նվազարանների գծով ուսուցում ծրագիրը», որի իրականացման ընթացքում բազմաթիվ դպրոցներում վերաբացվեցին ազգային նվազարանների բաժիններ: Ազգային նվազարանների ուսման վարձավճարների փոխհատուցումը հնարավորություն տվեց ապահովել ուսուցման մատչելիությունն ու վտանգված շատ մասնագիտությունների դասավանդումը: ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 16-ի N 529-Ն որոշմամբ ծրագրի շրջանակները ընդլայնվեցին՝ ներառելով նաև լարային և փողային նվազարանները:

2) 2013 թ. գործընթացը համալրվեց «ՀՀ-ում շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում» նպատակային ծրագրով: Ծրագիրը նպատակաուղղված է հայ կատարողական արվեստի ոլորտում (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) բնականոն սերնդափոխության ձևավորմանը, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի մրցունակության ապահովմանը, տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական ունակությունների զարգացմանը:

3) Մեթոդական աշխատանքների իրականացման նպատակով 2009 թ. ՀՀ մարզերի հենակետային 33 դպրոցում՝ յուրաքանչյուր մարզում՝ մեկական երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, կազմակերպվում են ուսումնամեթոդական օգնություն (վարպետության դասեր, վերապատրաստման դասախոսներ և այլն)՝ ուղղված դասավանդման նոր մեթոդների և հնարքների ներդրմանը, դասատուների գիտելիքների ընդլայնմանը՝ փորձառության փոխանցման միջոցով, մանկավարժների դասավանդման որակի բարձրացմանը, շնորհալի աշակերտների բացահայտմանը:

63. 2008 թ. միջոցներ են հատկացվում երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների համար ուսումնական նոր առարկայական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, ժողովածուների մշակման և հրատարակման համար: Հրատարակված գրականությունն անվճար տրամադրվում է հանրապետության բոլոր համայնքների գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններին:

64. Հանգստի և ժամանցի կազմակերպմանն ուղղված ծրագրերի իրականացում

Երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ կազմակերպելու համար իրականացվել են՝

1) «Դպրոցականի ֆիլիարմոնիա» ծրագիրը, որը նպատակաուղղված է երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությանը և բազմակողմանի զարգացմանը, դասական երաժշտության, ժողովրդական արվեստի, գեղանկարչության, թատրոնի հետ հաղորդակցմանը:

2) Հանրակրթական դպրոցների աշակերտների համար մշակութային հաստատություններ այցելությունների արձնեմենտային ծրագիրը նպատակաուղղված է դպրոցահասակ երեխաներին և սովորողներին պատմությանն ու մշակույթին հաղորդակցվելու մատչելիության ապահովմանը, երեխաների հոգևոր-մշակութային, գեղագիտական դաստիարակության նպատակային ուղղորդմանը:

3) «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում մայրաքաղաքի և մարզկենտրոնների թանգարաններ, համերգային և այլ մշակութային կազմակերպություններ» ծրագիրը, որի հիմնական նպատակն է՝ նպաստել երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը: Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2008 թվականից:

4) «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ծրագիրը, որն ուղղված է շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու խթանմանը:

5) Թանգարան ՊՈԱԿ-ներում ինտերակտիվ կրթական ծրագրերի, ցուցահանդեսների, համերգ-դասախոսությունների, էքսկուրսիաների կազմակերպումը նպատակա-ուղղված է երեխաների

հաղորդակցման հմտությունների, երևակայությունների խթանմանը, ստեղծագործելու ունակությունների զարգացմանը:

65. Պատանի ստեղծագործողների համար հանրապետական ու միջազգային մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում

1) «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթի նպատակն է մանկապատանեկան երգչախմբային արվեստի զարգացումը, հայ կոմպոզիտորների խմբերգային ստեղծագործությունների տարածումն ու հանրահռչակումը: Մրցույթի առաջին փուլն անցկացվում է մրցույթի հանձնաժողովի ներկայությամբ << մարզերում:

2) «Վերածնունդ» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոնի (Գյումրի) նպատակն է կատարողական արվեստում պատանի երաժիշտների կարողությունների զարգացումն ու խթանումը:

3) Յուրաքանչյուր տարի իրականացվում է մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնը:

4) Մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, ինչպես նաև մայրաքաղաքից դեպի մարզեր մշակութային կյանքի ապակենտրոնացման նպատակով << մշակույթի նախարարությունը կազմակերպում է փառատոներ, մրցույթներ, ցուցահանդեսներ:

66. Սոցիալապես անապահով և հատուկ կարիքներով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում պետական աջակցություն

1) << մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ը հատուկ ուսումնական հաստատություններում, մանկատներում և այլ հաստատություններում իրականացնում է արվեստում որոշակի ունակություններ ունեցող հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների 614 երեխաների անհատական և խմբակային անվճար ուսուցում: ՊՈԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է **12 ուսումնական հաստատություններում** (Երևան՝ 4, Վանաձոր՝ 3, Գյումրի՝ 2, Սպիտակ՝ 1, Գավառ՝ 1, Սյրեփանավան՝ 1):

2) Հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալապես անապահով կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտման ու ժամանակակից աշխարհում նրանց առավել ամբողջական ինտեգրման խթանման նպատակով իրականացվում է ցուցահանդեսներ, համերգներ ու մրցույթներ, այլընտրանքային կրթական ծրագրեր:

67. Մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն

Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը նպաստում է մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը: Տարեկան պետական աջակցությամբ երեխաների համար նկարահանվում է 4-5 մուլտֆիլմ:

68. Մշակույթի ոլորտում տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- 1) երեխաների մշակութային մասնագիտական ուսուցմանը և գեղագիտական դաստիարակությանը պետական աջակցության ցուցաբերումը.
- 2) երեխաների բազմաբովանդակ հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպումը.
- 3) երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտումը և խթանումը.
- 4) արվեստի և մշակույթի ոլորտներում բազմակողմանի և մասնագիտական գիտելիքների ուսուցանումը.
- 5) արվեստի բնագավառում ստեղծագործող շնորհալի երեխաների ներգրավումը. մանկապատանեկան կինոյի, թատրոնի գործունեության զարգացման խթանումը.
- 6) երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և սոցիալապես անապահով խավի երեխաների ազգային, համաշխարհային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցման նպաստումը.
- 7) երիտասարդ սերնդի արվեստների և արհեստների ուսուցման ապահովումը:

69. Ծրագրի խնդիրն է՝

- 1) գեղարվեստական կրթության մատչելիության ապահովում՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակում ուսման վարձավճարների փոխհատուցման շարունակականությամբ,
- 2) գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովում՝ երաժշտական գործիքների համալրմամբ, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացմամբ, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի մշակմամբ,
- 3) ուսուցման մատչելիության ապահովում՝ արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում, մասնավորապես՝ սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած մշակութային կրթության ապահովմամբ,

- 4) երեխաների ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծում նպատակային ծրագրերի իրականացմամբ,
 5) ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին հաղորդակցում՝ մշակութային միջոցառումների և գիտաճանաչողական ուղևորությունների իրականացմամբ,
 6) շնորհալի երեխաների ու երիտասարդների բացահայտում, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովում՝ մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, վարպետության դասերի և այլ միջոցառումների կազմակերպմամբ:

70. Ակնկալվող արդյունքը

- 1) ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ուսման վարձավճարների փոխհատուցումը նպատակաուղղված է գեղարվեստական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլորտի հետագա մասնագետներով համալրմանը:
 2) «Մշակութային կրթության աջակցման հիմնադրամի» կողմից մեթոդական աշխատանքների կազմակերպումը նպաստում է գեղարվեստական կրթական հաստատություններում ուսուցման որակի բարձրացմանը, կրթական նոր մեթոդների ներդրմանը, փորձի փոխանակմանը, վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, ժամանակակից դասագրքերով համալրմանը, վարպետության դասերի միջոցով ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
 3) ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծված ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրումը միտված է առավել նպատակային իրականացնել շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու խթանմանը նպատակաուղղված ծրագրերը:
 4) «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում գիշերօթիկ, հատուկ դպրոցներում իրականացվում է հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների արվեստների և արհեստների ուսուցում:
 5) «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագրի հիմնական նպատակն է նպաստել երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:
 6) «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում ծրագրի իրականացմամբ ներկայացվում են ՀՀ բոլոր մարզերի շնորհալի երեխաների ստեղծագործական աշխատանքները (համերգ, ցուցահանդես):
 7) Մանկապատանեկան թատրոնների հանրապետական փառատոնի անցկացումը նպաստում է մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը:
 8) Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը նպաստում է մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը:
 9) Մանկապատանեկան կինոյի և անիմացիայի փառատոնի իրականացումը նպաստում է հայրենական կինոարտադրության խթանմանը, լավագույն ֆիլմերի հեղինակների հայտնաբերմանը և խրախուսմանը:
 10) Թանգարան ՊՈԱԿ-ներում ինտերակտիվ կրթական ծրագրերի, ցուցահանդեսների, համերգ-դասախոսությունների, էքսկուրսիաների կազմակերպումը նպաստում է երեխաների հաղորդակցման հմտությունների, երևակայությունների խթանմանը, ստեղծագործելու ունակությունների զարգացմանը:

71. Ռազմավարություն

Երաժշտական և արվեստի դպրոցներին պետական աջակցության ցուցաբերման շարունակականության ապահովում.

Արվեստի տարբեր ոլորտներում նպատակային ծրագրերի իրականացում.

Միջազգային մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների մասնակցության նպատակով պատանի շնորհալի ստեղծագործողներին պետական աջակցության ցուցաբերման շարունակականության ապահովում

Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի գործունեության ապահովում և հատուկ կարիքներ ունեցող երեխաների ինտեգրման խնդրին ուղղված նպատակային ծրագրերի մշակում.

Մշակութային ծրագրերի իրականացման ընթացքում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում:

72.Արդարադատության ոլորտում ծրագրի հիմնական նպատակն է անչափահասների արդարադատության ոլորտում երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը, ընթացակարգերի և օրենսդրության բարելավումը՝ ելնելով երեխայի լավագույն շահից:

Ծրագրի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) Ապահովել արդարադատությանն առնչվող երեխայի (տուժող, վկա, իրավախախտ) իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ կրթության, համալիր զարգացման իրավունքը:

բ) Ապահովել անչափահասների արդարադատության ոլորտում օրենսդրական և ընթացակարգային բարեփոխումների շարունակականությունը՝ ձևավորելով համագործակցության սերտ և կայուն կառուցակարգեր, յուրաքանչյուր երեխայի խնդրին արագ և արդյունավետ արձագանքելու համակարգային մոտեցում:

գ) Բարձրացնել անչափահասների արդարադատության ոլորտում երեխաների հետ առնչվող մասնագետների կարողությունները երեխաների հետ աշխատանքի ուղղությամբ:

1) «Ազատագրված անչափահասների հանրակրթության իրականացում» միջոցառման նպատակն է ազատությունից զրկված անչափահասների հիմնական կրթության իրավունքի ապահովումը: Ներկայումս «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում որևէ ուսումնական հաստատության կողմից հանրակրթություն չի ապահովվում: Սույն միջոցառումը նախատեսում է հանրակրթության իրականացում կալանավորված և դատապարտված անչափահասների համար:

2) «Իրավախախտ անչափահասների գեղագիտական դաստիարակության, կրթամշակութային ծրագրերի իրականացում» միջոցառումը նախատեսում է իրավախախտ անչափահասների գեղագիտական և մշակութային ուսուցում՝ ուղղված նրանց մտավոր և գեղագիտական զարգացման, ստեղծագործական կյանքին մասնակցելու իրավունքի ապահովմանը: Հաշվի առնելով նաև մշակույթի դերը անձի զարգացման և վերասոցիալականացման գործում, սույն դասընթացները կնպաստեն հետագա իրավախախտումների բացառմանը: Միջոցառման շրջանակում կիրականացվեն արտադպրոցական դաստիարակության և մշակութային ուսուցման դասընթացներ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, պրոբացիայի անչափահաս շահառուների և պատժից ազատված անչափահասների համար:

3) «Անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության շարունակականության ապահովում» միջոցառման շրջանակում նախատեսվում է անչափահասների արդարադատության խորհրդի գործունեության արդյունավետության ապահովումը՝ ոլորտի հիմնախնդիրների համակարգված և համագործակցային մոտեցման, օրենսդրական բարեփոխումների շրջանակում երեխաների լավագույն շահի ապահովման նպատակով: Միջոցառման շրջանակում նախատեսվում է խորհրդի նիստերի կազմակերպում, համատեղ ծրագրերի իրականացում, իրավական ակտերի վերլուծություն, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում:

4) «Արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկման միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել երեխայի իրավունքների և ապահովման ուղղությամբ միջոցառումներ: Կկազմակերպվեն առնվազն 2 հանրային միջոցառում երեխաների մասնակցությամբ և միջմասնագիտական քննարկումներ:

5) «Արդարադատության ոլորտում երեխաների հետ աշխատող մասնագետների և ծառայողների վերապատրաստումների իրականացում, ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների մշակում և հրատարակում» միջոցառումը նախատեսում է ուսումնասիրությունների իրականացում և կարողությունների զարգացման դասընթացների կազմակերպում երեխաներին առնչվող մասնագետների համար, ինչպես նաև գործառնական ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների մշակում՝ երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից, մասնավորապես մինչդատական և դատական գործընթացում երեխաների հարցաքննության իրականացման, տուժող երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ:

6) «Հոգեբանական ծառայությունների ներդրման կառուցակարգերի ուսումնասիրություն և որակյալ ծառայությունների մատուցմանն աջակցում քաղաքացիական և քրեական գործերով օրենքի հետ առնչություն ունեցող երեխաների հետ աշխատանքում (դիտարկելով (Barnahus) մոդելը» միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել համապարփակ վերլուծություն և ներկայացնել ծրագիր հոգեբանական ծառայությունների ներդրման վերաբերյալ, ինչպես նաև պիլոտային տարբերակով կիրառել առաջարկվող հայեցակարգը:

73.Սպորտի ոլորտում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը երեխաների, պատանիների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով ղեկավարվել է ՀՀ կառավարության 2018 թվականի տարեկան ծրագրի «5.6. Սպորտ և երիտասարդություն» բաժնով:

Առողջ ապրելակերպի և սպորտի քաղաքականությանը ուղղված ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը նպատակն է՝ ապահովել անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, երեխանների, պատանիների և մատաղ սերնդի առողջության ամրապնդումն ու առողջ ապրելակերպի ձևավորումը, ակտիվ հանգստի կազմակերպմանն աջակցումը, հանրային կյանքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը:

74.«Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթ»

Մրցույթի նպատակն է՝

անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորումը:

Խնդիրներն են՝

- 1) ֆիզիկական վարժությունների միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում շարժողական ընդունակությունների ձևավորումը, առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի գաղափարի ձևավորումը,
- 2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչությունը, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորումը,
- 3) նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը, նախադպրոցական հաստատություններում և նախակրթարաններում (այսուհետ՝ Հաստատություն) ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանումը:

75.Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ին ից 3-րդ և 4-7-րդ դասարանների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառում:

Միջոցառման նպատակն է՝

1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում.

2) դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:

Միջոցառման Խնդիրներն են՝

- 1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդում, նրանց ֆիզիկական որակների բարելավում,
- 2) դպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում,
- 3) դպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում,
- 4) հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում:

76.«Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթ:

Մրցույթի պատակն է՝

Հայաստանի Հանրապետությունում գործող բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների ընդհանուր տիպի, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) երեխաների շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի մասսաականացումը:

Մրցույթի նդիրներն են՝

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնարավորությունների օգտագործում Հաստատությունների երեխաների դաստիարակության և առողջության ամրապնդման գործընթացում, Հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դերի կարևորում, ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպում:

77.«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ

«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը սկիզբ է դրվել 2004 թվականին որպես ՀՀ Նախագահի մրցանակ: Մրցույթին մասնակցում են հայրը, մայրը և երեխան: 2004 թվականին մրցույթին մասնակցել են 54 ընտանիքներ, որը տարեց տարի գրանցել է մասնակցության աճ: Արդեն 2010 թվականին մրցույթին

մասնակցել են 347 ընտանիք, իսկ 2015-2018 թվականներին շուրջ 2000 ընտանիք, որոնք արդեն մրցում էին 4 տարիքային խմբերով: Հատկանշական է նշել, որ մրցույթի եզրափակիչ փուլին 2014 թվականից մասնակցում են ընտանիքի կազմում հաշմանդամություն ունեցող ընտանիքները:

78.Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր:

Միջոցառման պատակն է՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորում:

2) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ և Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում:

Միջոցառման խնդիրներն են՝

1) ավագ տարիքի դպրոցականների ֆիզիկական պատրաստականության մոնիտորինգի անցկացում:

2) դպրոցականների և երիտասարդության շրջանում իրականացվող ռազմահայրենասիրական դաստիարակության և զանգվածային մարզական աշխատանքների հետագա բարելավում:

79.Հայաստանի հանրապետության մարզերում և Արցախի Հանրապետությունում հանրապետական մարզական փառատոն:

Միջոցառման նպատակն է՝

1) ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացում Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախում:

2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի բարձրացում:

Միջոցառման խնդիրներն են՝

1) բնակչության շրջանում ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում, երիտասարդությանը մարզական խմբակներում ընդգրկում:

2) համայնքներում ֆիզկուլտուրայի օրերի անցկացման ավանդույթի վերականգնում:

3) անհատի ներդաշնակ զարգացում և աշխատունակության բարձրացում, առողջ ապրելակերպի ձևավորում:

Փառատոնն անցկացվում է Հայաստանի Հանրապետության 48 քաղաքներում և Արցախի Ստեփանակերտ քաղաքում: Փառատոնին մասնակցում է շուրջ 20.000 մարդ:

80. Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների սպարտակիադա:

Միջոցառման նպատակն է՝

1) Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում,

2) ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում:

Միջոցառման խնդիրներն են՝

Աշակերտների շրջանում ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարելավում :

Սպարտակիադան անցկացվում է 4 փուլով` ներդպրոցական, համայնքային, մարզային և եզրափակիչ:

Սպարտակիադայի ծրագրում ընդգրկված են՝ մինի ֆուտբոլ, հնգամարտ, շախմատ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, հրաձգություն և բազկամարտ մարաձևերը:

81.«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթ

Մրցույթի պատակն է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացումը, նրանց ակտիվ հանգստի կազմակերպումը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությանը լայնորեն ինտեգրման գործընթացի խթանում:

Ծրագրին մասնակցում են մտավոր սահմանափակումներ ունեցող պատանիներ և երիտասարդներ, տեսողական, լսողական և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք, որոնք իրենց ուժերն են չափում շախմատ, շաշկի, դարթս, բասկետբոլ և հնգամարտ մարզաձևերում:

82. ՀՀ կառավարության առընթեր ոստիկանությունն անչափահասներին հանցավոր ոտնձգություններից զերծ պահելու, նրանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող աշխատանքներում առաջնային է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության դերը:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացված բազմաբնույթ կանխարգելիչ միջոցառումները նպաստել են հանցագործություն կատարած անչափահաս անձանց թվի նվազմանը /2016 թվականին՝ 351 անչափահաս, 2017 թվականին՝ 341 անչափահաս, 2017 թվականի 5 ամիսների

ընթացքում գրանցվել է 127 հանցագործության դեպք, 2018 թվականի նույն ժամանակահատվածում՝ 110 դեպք/:

Հարկ է նշել, որ դեռևս կան չլուծված խնդիրներ, որոնք պահանջում են համապատասխան լուծումներ:

12-18 տարեկան իգական սեռի հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների համար Հայաստանի Հանրապետությունում վերականգնողական կենտրոնի ստեղծումը:

83. Մտահոգիչ է վերջին տարիների ընթացքում ինչպես հանցագործություններ կատարած (2014 թվականին՝ 17, 2015 թվականին՝ 27, 2016 թվականին՝ 34, 2017 թվական՝ 28/, այնպես էլ տարբեր իրավախախտումներ կատարելու համար ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներում հաշվառված իգական սեռի անչափահասների թիվը /2014 թվականին՝ 60, 2015 թվականին՝ 81, 2016 թվականին՝ 94, 2017 թվականին՝ 83): Միաժամանակ պետք է նշել, որ ՀՀ ոստիկանությունում 2016 թվականին /ըստ օպերատիվ ամփոփագրերի/ արձանագրվել է իգական սեռի անչափահասների անհայտ կորելու 62, իսկ 2017 թվականին՝ 56 դեպք: Նշված անչափահասների գերակշիռ մասը հայտնվելով տարբեր կոնֆլիկտային իրավիճակներում հարազատների և ընկերական շրջապատի հետ, հեռանում են տանից և հայտնվում այնպիսի միջավայրում, ուր հնարավոր է դառնում ինչպես նրանց շահագործումն ու բռնության ենթարկվելու վտանգը, այնպես էլ նրանց կողմից հանցագործությունների և այլ իրավախախտումների կատարումը:

69.Իգական սեռի հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների վերականգնողական կենտրոնում նախատեսվում է կանխարգելիչ աշխատանքների իրականացում միայն հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների շրջանում, ինչը պահանջում է երկարաժամկետ ծառայությունների /դաստիարակչական, հոգեբանական, սոցիալական և այլն /մատուցում և բնականաբար վերջիններս պետք է ժամանակավորապես բնակվեն /գիշերեն/ տվյալ հաստատությունում:

84. ՀՀ ոստիկանության կողմից համայնքային վերականգնողական կենտրոնների ցանցի ընդլայնման կապակցությամբ շարունակվում են բանակցային գործընթացները միջազգային և պետական պատկան մարմինների հետ:

Գործող վերականգնողական կենտրոնները /ք.Կապան և ք. Աբովյան/ գործում են ՀՀ ոստիկանության և կենտրոնների պատասխանատուների փոխհամագործակցության շրջանակներում: Համայնքային վերականգնողական կենտրոնները հանդիսանում են համայնքահեն կենտրոններ (ցերեկային), կանխարգելիչ աշխատանքներ են իրականացնում իրավախախտումներ կատարած, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ծառայությունում հաշվառված անչափահասների, ինչպես նաև բռնության ենթարկված, սոցիալ-հոգեբանական աջակցության կարիք ունեցող անչափահասների հետ:

Վերոհիշյալ անչափահասների հետ աշխատանքները կազմակերպելիս վերականգնողական կենտրոնների աշխատանքային խմբերը համագործակցում են ինչպես պետական շահագրգիռ կառույցների, այնպես էլ տեղական ու միջազգային հասարակական կազմակերպությունների հետ, որոնց միջոցով անհրաժեշտության դեպքում աջակցություն է ցուցաբերվում վերականգնողական կենտրոնների շահառու հանդիսացող անչափահասներին և նրանց ընտանիքներին:

Նշված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է նպաստել նոր համայնքային վերականգնողական կենտրոնների բացմանը և ակտիվորեն համագործակցել գործող համայնքային վերականգնողական կենտրոնների հետ:

Ներկայումս գործում են Կապանի և Աբովյանի համայնքային վերականգնողական կենտրոնները, որտեղ 2017 թվականի ընթացքում ոստիկանության կողմից ուղորդվել է 71 անչափահաս:

85. Անչափահասների շրջանում իրավական գիտելիքների զարգացման, վերջիններիս հանցագործություններից կամ այլ իրավախախտումներից զերծ պահելու, անչափահասների նկատմամբ կատարվող բռնության դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով մշտապես ՀՀ տարածքում գործող բոլոր հանրակրթական դպրոցներում ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների ծառայողների ուժերով կազմակերպվում և անց են կացվում տարբեր իրավական թեմաներով զրույցներ և հանդիպումներ: Հանդիպումների ընթացքում ոստիկանության ծառայողների և դպրոցականների միջև ձևավորվում է վստահության մթնոլորտ, որի արդյունքում ոստիկանության իրավասու ծառայողը հնարավորություն կունենա բացահայտել անչափահասների նկատմամբ կատարված հանցագործությունների, այդ թվում բռնությունների դեպքերը:

Միաժամանակ նշված հանդիպումների ընթացքում կարևոր է անդրադարձ կատարել նաև ընտանիքում բռնության երևույթին, դրա դեմ պայքարի մեխանիզմներին և այն մարմիններն ու կազմակերպություններին, որտեղ կարող են դիմել բռնության ենթարկված անձինք:

86. Անչափահասների շրջանում կատարվող հանցագործությունները կանխարգելելու, նրանց հանցագործության մեջ ներգրավելու, ինչպես նաև բռնություններից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է նաև պարբերաբար ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների ծառայողների ուժերով իրենց կողմից ստասարկվող հանրակրթական դպրոցներում անցկացվող ծնողական և ծնողական կոմիտեների ժողովների ընթացքում անցկացնել զրույցներ: Զրույցների ընթացքում ծնողները կտեղեկացվեն անչափահասների շրջանում տարածված հանցագործություններին, իրականացվող կանխարգելիչ միջոցառումներին, ինչպես նաև զրույցների ընթացքում պետք է անդրադարձ կատարել ընտանիքում կատարվող բռնություններին, դրանց արձագանքման մեխանիզմներին: Միևնույն ժամանակ ծնողները կտեղեկացվեն թե ինչ ազդեցություն կարող են ունենալ ընտանիքում կատարվող բռնությունները անչափահասի վարքագծի և դաստիարակության վրա:

87. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ենթակա տարածքային ստորաբաժանումների կողմից Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, մասնավորապես՝ անչափահասների ժամանցի անցկացման վայրերում, այգիներում, պուրակներում ստուգայց-շրջագայությունների անցկացումը հնարավորություն կտա կանխարգելել երեխաների թրաֆիքինգի, աշխատանքային շահագործման դեպքերը, բացահայտել անչափահասներին մուրացկանության մեջ ներգրավող անձանց: Միևնույն ժամանակ ստուգայց-շրջագայությունների անցկացումը հնարավորություն կտա անչափահասներին զերծ պահել հանցագործություններ կատարելուց, մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելուց:

III. ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

88. 2019 թվականի ընթացքում իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2018 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից՝ նրանց խնամքի, բուժման և դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման, ֆիզիկական և մտավոր բնականոն զարգացման, հոգեբանական վերականգնման և արդյունավետ սոցիալականացման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Պատասխանատու կատարողը	Ակնկալվող արդյունքները	Կատարման ժամկետը	Վերստուգելի չափանիշ	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	2019թ. ընթացքում	6 մանկատանը կխնամվի 649 երեխա	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
2.	ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաններին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում)	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում	2019թ. ընթացքում	Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 120 երեխա, կկանխարգելվի 95 երեխայի մուտքը հաստատություններ	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

3.	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է շրջանավարտների իրավունքների և շահերի պաշտպանությունը	2019թ. ընթացքում	Ծրագրի շրջանակներում կվարձակալվի 4 բնակարան	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
4.	Սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, ներառումը հասարակությանը	2019թ. ընթացքում	Երեխաների սոցիալական հոգաձության 3 կենտրոնում 300 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական ծառայություններ	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

5.	Երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	2019թ. ընթացքում	Գիշերօթիկ 4 հաստատությունում կխնամվի 350 երեխա	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
6.	Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը	2019թ. ընթացքում	Ցերեկային կենտրոնում հաշմանդամություն կամ սոցիալ-հոգեբանական խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող շուրջ 250 երեխայի մատուցվող ծառայությունների համար կտրամադրվի աշխատավարձ	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

7.	Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված անձանց և երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է Թրաֆիքինգի և շահագործման, բռնության ենթարկված երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը	2019թ. ընթացքում	Թրաֆիքինգի /շահագործման/ ենթարկված միջին տարեկան 8 անձի, այդ թվում երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների տրամադրում	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
8.	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը	2019թ. ընթացքում	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 17 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
9.	Ներառական մանկապարտեզում հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակությանը	2019թ. ընթացքում	Ներառական մանկապարտեզում ծառայության կմատուցվի 24 երեխայի	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
10.	Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված և հաշմանդամություն ունեցող երեխայի և նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակությանը	2019թ. ընթացքում	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 450 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիալ-հոգեբանական ծառայություններ	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե

11.	Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի հմտությունների ձեռքբերումը և ներառումը հասարակությանը	2019թ. ընթացքում	Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 195 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի ծախս/	Հայաստանի Հանրապետության պետական բյուջե
